Արձանագրություն 3

**ՀՀՄՆԳՀԱՇՁԲ-19/45 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վերականգնողական աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 01.10.19թ.
ժ.11:00

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Կարեն Սիմոնյան /գնահատող/ |
| Հանձնաժողովի անդամ՝ | Հրանտ Հովսեփյան /գնահատող/ |
| | Ստեփան Ղազարյան /գնահատող/ |
| | Արմինե Ստեփանյան /բացող/ |
| | Կարեն Բայրամյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Անի Թաշչյան |

**1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին**

(Կ. Սիմոնյան)

1.1 «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետում ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և բավարարում է «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին:

**2. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ**

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը և հրավերի 7.18-րդ կետը հնարավորություն տալ «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ ներկայացնելով սույն ընթացակարգի հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին**

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ս/թ հոկտեմբերի 7-ին, ժամը՝ 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց ս/թ հոկտեմբերի 7-ին, ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում**

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Կարեն Սիմոնյան /գնահատող/ |
| Հանձնաժողովի անդամ՝ | Հրանտ Հովսեփյան /գնահատող/ |
| | Ստեփան Ղազարյան /գնահատող/ |
| | Արմինե Ստեփանյան /բացող/ |
| | Կարեն Բայրամյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Անի Թաշչյան |

**4. Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու, հայտը գնահատելու և գնահատման արդյունքների մասին**

(Կ. Սիմոնյան)

4.1 «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և սահմանված կարգով շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրած անհամապատասխանությունները:

4.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և հայտարարել 1-ին տեղ զբաղեցնող /ընտրված մասնակից/:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

4.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

4.4 Ընտրված մասնակցին, անգործության ժամկետի ավարտից հետո, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողով՝

Կ. Սիմոնյան /նախագահ/

Հ. Հովսեփյան

Ս. Ղազարյան

Ա. Ստեփանյան

Կ. Բայրամյան

Ա. Թաշչյան /քարտուղար/